

*Հաստատված է
«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտխորհրդի
2018 թվականի
Դեկտեմբերի 12-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ _____ Հ. Մ. Սահակյան*

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողները, «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում հանդես գալով որպես առանցքային շահառու, պետք է պաշտպանված լինեն իրենց ակադեմիական շահերի իրացման գործընթացում: Ուսանողների ակադեմիական շահերը հիմնականում առնչվում են ուսումնառության որակի, կրթագիտական ծառայությունների մատուցման տեխնիկական հագեցվածության, որակյալ դասավանդողների գործունեության, ակադեմիական ազնվության և խրախուսման անաչառության, ուսումնառության վերջնարդյունքների բովանդակային և ձևաչափային ներկայացման հետ:

1.2 Սույն ընթացակարգը նպատակաուղղվում է «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում ուսանողների ակադեմիական շահերի պաշտպանության գործընթացին:

2. Ակադեմիական պահանջմունքների բավարարվածությունը

2.1 Ուսանողների ակադեմիական պահանջմունքների բավարարման նախապայմաններից է կրթական ծառայությունների մատուցման և ՄՈՒՀ-ում ծավալվող հետազոտական գործունեության տեխնիկական անհրաժեշտ հագեց-

վածության աստիճանը: Ուսանողների կողմից ներկայացվող ուսումնական լաբորատորիայում, ընթերցասրահում համակարգչային տեխնիկայի աշխատանքի խափանման արձագանքները առավելագույնը 2 օրվա ընթացքում ուսումնասիրվում են և տրվում են իրավիճակի շտկման լուծումներ:

2.2 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում կողմից ուսումնական նյութերով ոչ բավարար ապահովվածության դեպքերի (գրադարանային ֆոնդի պակաս, էլեկտրոնային անբավարար ուսումնական շտեմարաններ, ինտերնետ միջավայրի անարդյունավետ աշխատանք և այլն) ուսանողական արձագանքները առավելագույնը 5 օրվա ընթացքում քննարկվում են ուսումնական մասում և իրավիճակի բարելավման գծով ձեռնարկված միջոցառումների տեղեկատվությունը ուսումնական մասի արձանագրության քաղվածքով իրազեկվում ուսանողներին՝ 2 օրվա ընթացքում:

2.3 Ուսումնառության ընթացքում դասավանդողների որակական հատկանիշների ընկալման անհամապատասխանությունների առկայության պարագայում ուսանողական արձագանքները առավելագույնը 10 օրվա ընթացքում քննարկվում են ուսումնական մասում և իրավիճակի բարելավման գծով ձեռնարկված միջոցառումների տեղեկատվությունը ուսումնական մասի արձանագրության քաղվածքով իրազեկվում ուսանողներին՝ 5 օրվա ընթացքում:

3. Ակադեմիական ազնվության և գնահատման անաչառության ապահովման գործընթացը

3.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում գործում է «Գրագողության դեմ պայքար»ի կարգ, որով ապահովվում է ուսանողների շահերի պաշտպանությունը գրագողության, միջանկյալ և ամփոփիչ քննաշրջաններում գնահատման գործընթացներում:

3.2 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում գործում է նաև ուսանողներին ոչ նյութական և բարոյական խրախուսման համակարգ, որի գործունեության արդացվածության գործընթացը կարգավորվում է ՄՈՒՀ-ում:

4. ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում սովորողների ակադեմիական շահերի պաշտպանությունը

4.1 «ՀՈԻՄԿ» ԿՀ-ն պարտավորվում է երաշխավորել ուսանողների կրթական գործընթացի անընդհատությունը և նախատեսված ուսումնառության վերջնարդյունքների ամբողջական շրջանակի ձևավորումը:

4.2 «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի գործունեության դադարացման գործընթացը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով: ՄՈԻՀ-ի գործունեության դադարեցման դեպքում ռեկորատը պարտավորվում է իրազեկել ուսանողությանը:

5. Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման շրջանակը

5.1 Ուսումնառության անհրաժեշտ և բավարար վերջնարդյունքները սահմանվում են ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներով:

5.2 Ուսումնառության վերջնարդյունքները սահմանվում են մասնագիտության գծով սահմանված ՄԿԾ-ով, որը իրազեկվում է ուսանողներին իրենց մասնագիտական ներածության դասընթացների ժամանակ:

5.3 Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման նկարագիրը տրվում է ավարտական դիպլոմի հավելվածում, որտեղ բնութագրվում է շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների շրջանակը: